ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ XIX դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ

Հունիսի 19-ին ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված XIX դ. երկրորդ կեսի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին։ Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հ. Ա. Ավետիսյանը։ Նա նշեց, որ նստաշրջանի նպատակն է լուսաբանել հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը կազմող հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության կարևոր այդ շրջանը և դրանով իսկ արժանի տուրք մատուցել ժողովրդական հերոսներին, հակահարված տալ պատմության կեղծարարներին, էլ ավելի նպաստել սովետական հայրենասիրության խորացման ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով նոր սերունդի դաստիարակության գործին։

Նստաշրջանում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Դ. Ներսիսյանը հանդես եկավ «Հայ ազգային-ազատագրական պայքարը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները» թեմայով։ Նա կանգ առավ XIX դ. երկրորդ կեսին օսմանյան բռնապետության դեմ ծավալված հայ ազգային-ազատագրական շարժման ընդհանուր բնույթի հարցերի վրա և արեց մի շարք տեսական եզրակացություններ։ Մասնավորապես նշվեց, որ հակասուլթանական այդ շարժման գլխավոր շարժիչ ուժը արևմտահայ գյուղացիությունն էր, որն անօրինակ ճնշումներից ու հարստահարություններից ազատվելու համար դիմեց զինված ելույթների, ապստամբությունների ու ինքնապաշտպանական կռիվների։ Ժողովրդական մասսաների ազատագրական պայքարին գործուն մասնակցություն ունեցավ առաջավոր, դեմոկրատական մտավորականությունը, որի շնչերով հիմնվեցին մի շարք գաղտնի քաղաքական խմբակներ ու կազմակերպություններ։ Հայ ազատագրական պայքարը Օսմանյան կայսրության մեջ XIX դ. ծավալված ազգային-ազատագրական շարժման ընդհանուր շղթայի մի օղակն էր։ Սերբերի, հույների, բուլղարների և մյուս ժողովուրդների հակաօսմանյան ազատագրական պայքարը շատ ընդհանրություններ ունի հայ ազատագրական շարժման հետ։ Առկա են եղել փոխազդեցություններ, գաղափարական ու գործնական-քաղաքական կապեր, ընդհանուր թշնամու դեմ միատեղ պայքարելու ձգտում ու փորձեր։ Հայ ազատագրական շարժումը ուներ ռուսական կողմնորոշում։ Արևմտյան տերությունները պաշտպանում էին օսմանյան պետությանը և, փաստորեն, հանդես էին գալիս հայ և մյուս ժողովուրդների հակասուլթանական ազատագրական շարժումների դեմ։ Մ. Ներսիսյանն այնուհետև նկատեց, որ ժամանակակից հետադիմ ազդայնամոլ պատմաբաններն ու հրապարակախոսները և քաղաքական նկատառումներով դրանց ձայնակցող արևմտյան մի շարք հեղինակներ, կեղծելով պատմական իրողությունը, պնդում են, թե Արևմտյան Հայաստանում տեղի են ունեցել միայն արկածախնդիր դանդաղ մարդկանց կողմից արհեստականորեն կազմակերպված անջատ ելույթներ, բայց ոչ ինքնաբուխ ժողովրդական, մասսայական շարժում։ Պատմության կեղծարարները, որ փորձում են ամեն կերպ վարկաբեկել հայ ազատագրական պայքարը, «մոռանում են» այն հանրահայտ ճշմարտությունը, որ ազգային և սոցիալական դաժան ճնշումների ու հարստահարությունների ենթակա ամեն մի ժողովրդի իրավունքը և սրբազան պարտականությունն է ոտքի կանգնել՝ իր կյանքը, գույքն ու պատիվը, իր ազգային անկախությունը և ազատությունը ապահովելու համար։

Պատմական գիտությունների թեկնածու Է. Ա. Կոստանդյանի զեկուցումը նվիրված էր XIX դ. 80-ական թվականների արևմտահայ ազատագրական շարժումներին։ Զեկուցողը նկատեց, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներում առաջին անգամ միջազգային դիվանագիտության քննության առարկա դարձավ Հայկական հարցը՝ արևմտահայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը։ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Բ. Պորտը պարտավորվեց բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, հայ բնակչությանը պաշտպանել քրդերի և չերքեզների հարձակումներից։ Եվրոպական պետությունների աչքերին թոզ փչելու համար Թուրքական կառավարությունը կազմեց հանձնաժողովներ և բարենորոգումներն իրագործելու պատրաստակամություն։

վակի տակ դրանք ուղարկեց Արևմտյան Հայաստան, իրականում սաստիկ սրելով հայ-քրդական հակասությունները։ Այդ նպատակով էլ սիրաշահեց քրդական ռազմական վերնախավին և նրան իր ձեռքին գործիք դարձրեց արևմտահայության ծրագրված կոտորածներին մասնակից դարձնելու համար։ 1880-ական թվականներից սկսվեցին համիդյան «զուլումը» տարիները։ Արևմտահայությունը ոտքի կանգնեց պաշտպանելու իր կյանքը, պատիվն ու ունեցվածքը։ Դիմադրական-ազատագրական շարժումները ծավալվեցին առաջին հերթին Վանի, Էրզրումի, Մուշի կուսակալություններում։ Ստեղծվեցին գաղտնի կազմակերպություններ և ընկերություններ՝ «Սև խաչը» Վանում և «Պաշտպան Հայրենյացը»՝ Կարինում։ Այդ ընկերությունների առաջնահերթ նպատակը ժողովրդի ինքնապաշտպանության գործի նախապատրաստումն էր, զենքի հայթայթումը, զինավարժությունը։ Թե՛ Վանում և թե՛ Կարինում այդ շարժման հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր, արհեստավորությունը և ժողովրդի ծոցից դուրս եկած մտավորականությունը։ «Սև խաչը» և «Պաշտպան Հայրենյացը» կապեր հաստատեցին միմյանց հետ։ Նրանց գաղափարական ղեկավարներն էին Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը և Կ. Կամսարականը։ Մուշում և Զեյթունում այդ շարժումներն ընթացան այլ հունով։ Ժողովրդական մարտեր սկսվեցին քուրդ բեկերի և կառավարական պաշտոնյաների դեմ։ Ծավալվեց ժողովրդական վրիժառուների՝ հայդուկային շարժումը, որն ավելի ուժեղ սոցիալական բովանդակություն ուներ։ Հ. Սարկավագը, Արաբոն և ուրիշներ անձնուրաց հերոսների առաջին շարքերում էին։ Տասնամյակի վերջում, այնուհետև ասաց ղեկուցողը, ստեղծվում են քաղաքական կուսակցությունները. 1885-ին Վանում ստեղծվում է «Արմենական» կազմակերպությունը, որն իր գործունեությունը ծավալում է առավելապես հետագա տասնամյակներում և հետզհետե վերաճում է կուսակցության։ 1887-ին ծնվում ստեղծվում է «Հնչակյան» կուսակցությունը, որն իր մոտակա նպատակը համարում էր Արևմտյան Հայաստանի ազատագրումը և ռամկապետական կարգերի ստեղծումը։ Այսպիսով, եզրակացրեց Կոստանդյանը 1880-ական թվականները, նախորդ տասնամյակների հետ համեմատած, նշանավորվեցին ազգային-ազատագրական շարժումների վերելքով և պայքարի ակտիվ ու պասսիվ ձևերի համադրությամբ։

Իր ղեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Պողոսյանն անդրադարձավ XIX դ. 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հայերի ինքնապաշտպանական կռիվներին։ Նա հանգամանորեն լուսաբանեց Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում հայ ժողովրդի համար ստեղծված սոցիալական ու քաղաքական ծանր վիճակը։ Այդ պայմաններում հայության մի մասը բռնեց զաղթի ուղին, իսկ ժողովրդի առավել ըմբոստ տարրերը բարձրացան լեռները, խտացնելով հայդուկների շարքերը։ Այսպիսով, արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները հետևանք էին ժողովրդի ծանր վիճակի, օրինաչափ էին և ներմուծված չէին դրսից։ Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վառ դրսևորումներից էին Սասունի 1894 թ. հերոսամարտը, 1895 թ. Զեյթունի և 1896 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվները, որոնց ընթացքում իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար ոտքի ելած հայորդիները դրսևորեցին անօրինակ քաջություն ու անձնազոհություն։ Վերջում զեկուցողը նշեց, որ արևմտահայության XIX դ. 90-ական թվականների պատմության ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել. 1. քննվող ժամանակաշրջանում հայկական կոտորածները կազմակերպված էին Թուրքական կառավարության կողմից։ Կոտորածներին մասնակցում էին Թուրքական բանակը, համիդիյե գնդերը և մահմեդական մոլեռանդ ամբոխը, 2. կոտորածները նպատակ ունեին պակասեցնելու հայերի թիվը, իսկ կենդանի մնացածներին ստիպել թողնելու իրենց հայրենիքը, 3. Սասունի, Զեյթունի և Վանի վրա հարձակումների նպատակը հայ ազգային-ազատագրական շարժման այդ կարևոր կենտրոններին հարվածելն էր, 4. այդ կոտորածները ցեղասպանություն էին, որն այժմ փորձում են հերքել պատմության կեղծարարները։

«Ռուս առաջադեմ հասարակայնությունը և արևմտահայությունը XIX դարի վերջերին» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Համբարյանը։ Նա ընդգծեց, որ 1890-ական թվականների կոտորածներից հետո արևմտահայերի դրությունն ավելի վատթարացավ։ Թուրքական իշխանություններն ու քուրդ աղաները նոր ուժով շարունակեցին բռնագրավել նրանց հողերը և սաստկացնել սոցիալական ու ազգային ճնշումները։ Արևմտահայերը հարկադրված դիմեցին Ռուսաստանին, խնդրելով նրա միջամտությունը՝ իրենց վիճակի թեթևացման համար, բայց ցարական պաշտոնական շրջանները բացասական վերաբերմունք ունեին արևմտահայ ազատագրական շարժումների հանդեպ։ Այլ էր սակայն ռուս առաջադեմ հասարակայնության վերաբերմունքը։ Այն պաշտպանում էր հայ ժողովրդի արդար գործը, մեծ տերություններից, այդ թվում և Ռուսաստանից, պահանջում ներգործել սուլթանի վրա, կանխել հայկական հալածանքները, հակահայկական արյունոտ քաղաքականությունը։ Հայանպաստ

հրապարակախոսական հոդվածներով ու գեղարվեստական ստեղծագործություններով հանդես եկան ռուս մի շարք գրողներ ու հրապարակախոսներ՝ Յու. Վեսելովսկին, Ե. Մորոզովը, Վ. Գոլցեը, Վ. Դոլմատովը և ուրիշներ։ Ռուս մարդիկ, վերջում ասաց զեկուցողը, կազմակերպեցին նաև հանգանակություն՝ հօգուտ տարաբախտ հայերի։ Այդ գործին իրենց համեստ միջոցներով մասնակցեցին նաև բանվորները, գյուղացիները և զինվորները։

Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Բ. Զարիբջանյանը, Ս. Տ. Դուրեմյանը, պատմական գիտությունների դոկտորներ Մ. Կ. Ջալալյանը և Ա. Պ. Սիմոնյանը։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Հ. Ա. Ավետիսյանը։ Նա ասաց, որ պատմության ինստիտուտում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հարցերը այսուհետև կդառնան բազմակողմանի ու ավելի խոր ուսումնասիրության առարկա։ Հատուկ ուշադրության կարժանանա XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժումների, Սասունի, Սասիդամիշի, Սարդարապատի, Ապարանի, Զարեհիսայի հակատամարտերի պատմության ուսումնասիրությունը։